ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2025

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ՕԼԻՄՊԻԱԴԱ. ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

ԹԵՍՏ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

1 – 2
2 – 2, 3, 4, 5 (նաև՝ 10)
3 – 2
4 – 4, 5, 7, 8, 9
5 – 1, 3, 4
6 – 3, 4
7 – 3, նաև՝ 4, նաև՝ 3, 4
8 – 4
9 – 4
10 – 2
11 – 1, 3, 4, 5
12 – 2, 4, 6, 7, 8, 9
13 – 1, 2, 4, 5, 6, 7, 8, 9,10
14 – 1
15 – 4
16 – 2
17 – 4
18 – 1
19 – 1
20 - 4
21 – 2
22 – 1, 4
23 – 1, 2, 3, 4, 5
24 – 3
25 – 3, 4
26 – 1, 3, 5
27 – 1
28 – 1
29 – 3
30 – 1
31 – 3
32 – 1
33 – 3
34 – 3
35 – 2
36 – 3
37 – 1, 2, 4
38 – 4

39 - 4
40 – 1
41 – 3, 4, 5
42 – 2
43 – 1, 4
44 – 2
45 – 3
46 – 2, 3, 5
47 – 1
48 – 1
49 – 2, 4
50 – 1, 4, 5
51 – 2
52 – 3
53 – 2
54 – 4
55 –1) u, u, ճ, ճ, ճ
2) u, u, u, u, u
56 – 2
57 – 3
58 – 1, 2
59 – ճ, ճ, u, ճ, u, u
60 – ճ, ճ, u, u (նաև՝ ճ), u, u

1. Տրված բառերից քանիսո՞ւմ ուղղագրական սխալ *կա*.

հանդիպակաց, բեռնավտո, տարընթերցում, արտասուք, հայոյել, արհամարել, երեսնական, կոծել, կարճել, հիսկել

1) երեքում
2) չորսում
3) հինգում
4) վեցում

2. Նշել այն բառերի (բառաձյերի) համարները, որոնցում ուղղագրական *սխալ կա*.

1. հետընթաց, 2. ուղորդել, 3. հայլապատ, 4. հարսնացույից, 5. անկոտրուն, 6. Հաղպատ, 7. ջրահեղձ, 8. կկկոցի, 9. հովար, 10. Չալըմյան, 11. Հաագա, 12. վայրկյանական

3. Ո՞ր շարքում բաղադրիչների՝ գծիկով գրության *սխալ կա.*

1) գոռում-գոչյուն, ողջ-առողջ, կիսատ-պռատ
2) մետր-վայրկյան, մեկ-երրորդ, հինգ-հինգ
3) ծլել-ծաղկել, առոք-փառոք, տուն-թանգարան
4) ինչ-որ, Տեր-Կիրակոսյան, գիշեր-ցերեկ

4. Նշել այն հարադրավոր հատուկ անունների համարները, որոնցում մեծատառի գործածության *սխալ կա.*

1. Մեծ Մասիս, 2. Ձերդ բարեծնություն, 3. Վահագն Վիշապաքաղ, 4. Թադևոս Առաքյալ, 5. Կիլիկիայի Թագավորություն, 6. Կենտրոնական Ասիա, 7. արևելյան Եփրատ, 8. Վիեննայի մխիթարյան միաբանություն, 9. Հարավաֆրիկյան հանրապետություն, 10. Ասեղի հրվանդան

5. Նշել այն շարք(եր)ի համար(ներ)ը, որ(ոնց)ում չհնչյունափոխված բառ *կա.*

1) վարչական, բնութագիր, ծովափնյա
2) ուսուցիչ, ոսկեհեր, աներևութանալ
3) ձեռնպահ, կայսրուհի, խտրություն
4) շուրջառ, դալկահար, սառցաշերտ

6. Ո՞ր շարքում բառի իմաստի սխալ բացատրություն *չկա*.

1) ***հրապարակել*** – թերթ, նյութ, գիրք տպագրել՝ լույս ընծայել, ***խոպան*** – բոլորովին չհերկված և չմշակված հող
2) ***պաշտոնական*** – պաշտոնյային հատուկ, պաշտոնյայի, ***գերակատարել*** – լավագույն ձևով կատարել
3) ***ապառաժ*** – հաստատուն բաղադրություն ունեցող կարծր՝ քարային հանքատեսակ, ***անդրբևեռ*** – հյուսիսային կամ հարավային բևեռային շրջագծից այն կողմ տարածվող շրջանը
4) ***հետևորդ*** – որևէ ուսմունքի կողմնակից, ***հետնորդ*** – մեկի մահվանից հետո մնացած սերունդ

7. Ո՞ր դարձվածքի դիմաց գրվածը դրա իմաստի ճիշտ բացատրությունը չէ.

1) ***մի տան պես*** – հարազատի նման
2) ***մի մարդու պես*** – միաբան
3) ***մի սանրի կտավ*** – միևնույն տեսակի
4) ***մի հայացքով*** – շատ արագ

8. Քանի՞ շարքում փակագծերում տրված բառին հականիշ բառ *չկա*.

1) ոռոգելի, ջրառատ, սակավաջուր (*անջրդի*)
2) թռչկոտել, լիցքավորել, զբաղվել (*պարպել*)
3) անուսադիր, ուսումնասեր, տգետ (*ուսյալ*)
4) սնոտիապաշտ, դատարկամիտ, մեծամիտ (*սնապարծ*)

9. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հոմանիշներ.

1) ոստ – շիվ, սուր – շեղբ, նվիրել – ընծայել
2) անշնորհակալ – երախտամոռ, սակավ – քիչ, սայթաքել – գլորվել
3) շշնջալ – բողոքել, չքվել – անհետանալ, պատկառանք – հարգանք
4) հագենալ – կշտանալ, կռահել – գուշակել, սաստիկ – ուժգին

10. Ո՞ր շարքի բոլոր բառերն են գործածվում միայն արյմտահայերենում.

1) աղվոր, քով, սմբուկ, վախնալ
2) ըլլալ, ակռա, արթննալ, էրիկ
3) հավկիթ, պզտիկ, համացանց, խոկալ
4) հեռատեսիլ, ասանկ, ինքնաշարժ, գամ

11. Նշել այն շարքերի համարները, որոնցում դարձվածքի (շրջասույթի) իմաստը սխալ է բացատրված.

1) **ձեռքը թեթյ** – հաջողակ, բախտավորություն բերող, **ձեռքից գալ** – կարող ընդունակ լինել
2) **շունչ առնել –** հանգստանալ, դադար առնել, **շունչ տալ** – կենդանացնել, կյանք տալ
3) **սիրտը հովանալ –** մեծ ձեռքբերում ունենալ, **սիրտը շահել –** համակրանք առաջացնել
4) **սիրտ առնել** – քաջություն ձեռք բերել, **սիրտը կպչել** – ամուսնանալ
5) **քար կտրել** – շինարարությամբ զբաղվել, **քար քաշել** – ծանր աշխատանք կատարել

12. Ո՞ր բառերն են կազմությամբ *բարդ* (առանց ածանցի).

1. սրբագրիչ, 2. կենսաթրթիռ, 3. ակնածանք, 4. մաքսատուն, 5. տարասեռ, 6. զինակոչ, 7. մարգարտահուռ, 8. ելևէջ, 9. ուղեպարկ, 10. մեծարգո

13. Նշել այն բառերի համարները, որոնց արմատին կարող է միանալ *յ* բառ կազմել *-ք* վերջածանցը (առանց երկրորդ ածանցի).

1. եզրակար, 2. հոգեհմա, 3. փողոց, 4. սահանք, 5. արգելակ, 6. զորացույց, 7. մտամոլոր, 8. հավալուսն, 9. փորձառու, 10. հեքիաթասաց

14. Ո՞ր նախադասության մեջ հոդի գործածության սխալ *կա*.

1) Եգիպտացորենի գլխավոր արտադրողները եղել են և մնում են ԱՄՆ-ը, Չինաստանը և Բրազիլիան:
2) Մի՛ հրապուրվեք երկար զբոսանքով, ընդհակառակն, լավ է հաճախակի և երկարատև հանգիստը:
3) Եվ ուրեմն գիտեք՝ մեզ ինչ է սպասում այստեղ:
4) Այսինքն՝ ընդհանուր հողահատկացումը եղել է 600 քմ:

15. Ընդգծված դերանուններից ո՞րն է գործածված *շատ* բառի նշանակությամբ.

1) ***Ինչե՛ր*** ասես, որ չեն արել այս ձեռքերը.....
2) Պսակվելիս ***ո՛նց*** են պարել այս ձեռքերը....
3) 1960-ականներ, ազգային հուժկու զարթոնք....Եվ ***ի՛նչ*** տարիներ:
4) ***Ինչքա՛ն*** ցավ եմ տեսել ես, Նենգ ու դավ եմ տեսել ես....

16. Ընդգծվածներից ո՞րը հարակատար դերբայ չէ.

1) Կրակի վրա **խորոված** միսը շատ համեղ էր:
2) Կատակով ասաց, որ գյուղում **նշանած** ունի:
3) Փայտի **հատված** մասը պիտանի չէր այլևս:
4) Կոշիկը նեղ էր, և ոտքի **հարված** տեղը սաստիկ ցավում էր:

17. Ո՞ր նախադասության մեջ համադասական շաղկապ *չկա.*

1) Սրընթաց պախրա՞, թե՞ գայլ գիշատիչ Շեշտակի անցավ փարախի մոտով:
2) Տարբեր ժողովներում ճառեր ես ասում, սակայն թշնամիդ վաղուց է նենգաբար գործում:
3) Բաղդադի փողոցները, չնայած անտանելի շոգին ու թեժ արևին, հեղեղված էին մարդկանցով:
4) Մինչև առուն ջուր գա, գորտի աչքը դուրս կգա:

18. Ո՞ր նախադասության մեջ *մոտ* բառը գործածված չէ մակբայ խոսքի մասի նշանակությամբ.

1) Հիվանդի **մոտ** մնացին **մոտ** ազգականները:
2) Ծառի տակ նստոտել էին **մոտ** երկու տասնյակ զինվորականներ:
3) Մի՛ վախեցեք, **մո՛տ** եկեք, դուք օգնության կարիք ունեք:
4) Աթոռը հարմար տեղում դրված չէ. **մո՛տ** բերեք:

19. Ո՞ր նախադասության մեջ է *ինչ*-ը շաղկապ.

1) Չեմ տեսել նրան, **ինչ** վերադարձել է:
2) Նվիրեցի, **ինչ** ունեի:
3) Երբեք չեմ մոռանա. **ի՛նչ** երանելի օր էր:
4) Չգիտեի՝ **ինչ** անեի. կանգնել էի քար կտրած:

20. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ.

1) բազկոսկր, շնաձուկ, հարթաչափ, խաչքար
2) կիլոմետր, նստացույց, տեսակետ, աշխատավարձ
3) մեծատառ, քաղաքադուռ, ենթասպա, կողմնացույց
4) մորաքույր, շարասյուն, հանքահոր, տոնածառ

21. Ո՞ր շարքի բոլոր դերանուններն ունեն գոյականից տարբեր (դերանվանական) հոլովում.

1) մենք, ես, իրենք, ոչ ոք
2) նա, դու, ով, ինքը
3) դուք, սա, դրանք, մեկը
4) ոչինչ, իրար, նրանք, դա

22. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում հարկադրական եղանակի ժամանակաձ *չկա.*

1) Օրենքները չպետք է տալ այն մարդուն, ով դրանց տերն է արդեն:
2) Մի՞թե կատարյալ փրկություն պիտի ինձ չպարգևես:
3) Թե ուզում ես չսուզվել ճահճուտները անհունի, Պիտի աշխարհը սիրես ու աշխարհով հիանաս:
4) Կլինի՞ արդյոք, որ բազմախորտակ Տապանը մարմնիս տեսնեմ նորոգված:

23. Նշել այն բայերի համարները, որոնք տվյալ գործածության մեջ չեզոք սեռի են.

Հաղարջը ամենից **1**)տարածված հատապտուղն **2**)է, որին կարելի է **3**)հանդիպել գրեթե ողջ աշխարհում: Այն **4**)աճում է նույնիսկ Սիբիրի կոշտ տարածություններում: Չի աճում միայն երկու մայրցամաքներում՝ Ավստրալիայում և Անտարկտիդայում: Առավել օգտակար և համեղ հաղարջը հենց հյուսիսում աճողն է, եթե իրհարկե առանց այդ էլ հյուսիսային կարճ ամառը տաք է **5**)լինում:

24. Ընդգծված բոլոր բայերը անկանոն են. դրանցից որի՞ կազմության մեջ անկանոնություն չի դրսյորվել.

1) Սակայն դարձի՛ր, ***վերադարձի՛ր*** դու ինձ մոտ....
2) Ես հաշտ էի ապրում իմ բախտի հետ, ... Բայց դու ինչո՞ւ ***եկար***, իմ սեթևե՛թ....
3) ....Եվ ինչ ***տալու էի*** ես աշխարհում նրանց, Իմ չսիրա՛ծ աղջիկ, տվեցի քեզ....
4) Կարոտներիս ծովի կղզիներում անցած Դու իմ կղզին ***եղար*** միակ ոսկե:

25. Նշել այն նախադասությունների համարները, որոնց մեջ ընդգծված անկանոն բայերը անկանոնություն չեն դրսյորել.

1) ***Տարել***, ներել ու սիրել, Վատը լավ եմ տեսել ես:
2) Պա՛րզ ***ասա***, որ մարդ մի բան հասկանա:
3) Հիշի՛ր, որ վաղը ինձ համար նոր գրքեր ***ես բերելու***:
4) ***Ելի՛ր***, գոտեպնդվի՛ր, հաղթության ժամը մոտենում է:

26. Նշել այն տարբերակների համարները, որոնցում ձյաբանական վերլուծության *սխալ կա*.

Բանավեճի արվեստը՝ ***Էրիստիկան****, ձևավորվել և իր ծաղկման գագաթնակետին է հասել Հին Հունաստանում, թեև մասամբ ուսումնասիրվել է նաև Հին աշխարհի տարբեր երկրներում:*

1) **Էրիստիկան** – հասարակ գոյական, **ձյավորվել** – անորոշ դերբայ
2) **իր** – դերանվանական հոլովում, **ծաղկման** – ***ան*** արտաքին հոլովում
3) **հասել** – պարզ բայ, **Հին** – ածական
4) **թեյ** - ստորադասական շաղկապ, **մասամբ** – չափի մակբայ
5) **ուսումնասիրվել է** – ներկա ժամանակ, **տարբեր** – ածական

27. Ո՞ր նախադասության մեջ շարադասական սխալ *կա*.

1) Եթե դուք ամբաստանյալ Թեիլերյանին հանցավոր ճանաչեք և անգամ նրան դատապարտեք հիմնավորված մահվան, այդ դեպքում իսկ չարիքը մեծ չի լինի, քանի որ հանրապետության նախագահը, անկասկած, նրան ներում է շնորհելու:
2) Սովորաբար հռետորը պետք է պահպանի խոսքի միջին արագություն՝ արտասանելով րոպեում 100-120 բառ:
3) Պետք է լինել հանդուրժող ամենատարբեր կարծիքների նկատմամբ, եթե անգամ դրանց համաձայն չեք:
4) Վարուժանը՝ դեռևս ուսանող, նամակներից մեկում 1907-ին գրում է. «Միակ նպատակս է հայրենիքին օգտակար դառնալ. ահա գաղափարականս, որ զիս կ՛ոգևորե»:

28. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ *չկա*.

1) Քիմիայի ուսումնասիրության առարկան նյութի հատկություններն են, դրանց բաղադրությունը և կառուցվածքը:
2) Ե. Չարենցը հայ նորագույն գրականության այն բացառիկներից է, որի մասին առանց երկմտելու կարելի է ասել՝ համաշխարհային մեծության բանաստեղծ է:
3) Դատապարտված եք, եթե լուրջ արդյունքներ չեն ստեղծում քո երկրի ո՛չ մշակույթը, ո՛չ տնտեսությունը և ո՛չ էլ գիտությունը:
4) Սեղանին նետված այդ մի քանի ծրագիրը բնավ հիմք չեն մրցույթը կազմակերպելու համար:

29. Ընդգծվածներից ո՞րն է նախադասություն.

1) Քաղաք **Երյան**. գտնվում է Հրազդանի երկու ափերին:
2) Գնացի **Երյան՝** իմ երազների քաղաք:
3) **Երյան**. իմ երազների քաղաք:
4) **Երյա՜ն,** իմ երազների քաղաք:

30. Ո՞ր նախադասության մեջ միասնության խնդիր *կա*.

1) Մի խումբ ընկերներով մեկնեցին:
2) Գնացքով և ինքնաթիռով մեկնեցին:
3) Ծաղիկներով և ընծաներով մեկնեցին:
4) Հատուկ հանձնարարականով մեկնեցին:

31. Ո՞ր նախադասության մեջ դերբայական դարձված *չկա* (նախադասությունները կետադրված չեն).

1) Իմանալով որ խաղը տանուլ է տալու հրաժարվեց մասնակցել:
2) Դժվար է անճաշակ մարդուն լավ ստեղծագործություն հասկացնելը:
3) Հուսահատված և ընդարմացած նստեց պատի տակ շունչ առնելու:
4) Ձին վրնջաց անսպասելի ծառս լինելով:

32. Ո՞ր տարբերակում նախադաս գլխավոր նախադասություն *կա*.

1) Ադամը, որ սպասում էր Եվայի վերադարձին, եկավ, նստեց նրա կողքին և վախով բռնեց նրա ցուրտ ձեռքը:

2) Որը գյուղից էր եկել, արդեն կարողանում էր ընտելանալ նոր միջավայրին և իրեն լավ զգալ:
3) Ինչ բերել էր, արագ լցրեց սեղանի և շփոթված դուրս եկավ:
4) Մարդը երբ ժպտում է, օգտագործում է 17 մկան, մինչդեռ երբ զայրացկոտ տեսք է ընդունում, գործածում է 43-ը:

33. Ո՞ր նախադասության մեջ պայմանի պարագա երկրորդական նախադասություն *կա*.

1) Անտանելի է, երբ տեսնում ես անարդարություն ու հալածանք:
2) Չեմ սիրում, երբ խոսքը գործ չի դառնում:
3) Սերն ու սիրտն էլ երբ չկա, կրակն ընկանք, զո՜ւր ընկանք:
4) Երբ էլ լիներ, ինչ ժամի էլ լիներ, տուն էր վերադառնում:

34. Ո՞ր նախադասությունն է միակազմ.

1) Դո՛ւ՝ երկու տա՛ռ, Դո՛ւ՝ հասարա՛կ մի դերանուն:
2) Մայրս, մեր հացն է մայրս, Մեր տան աստվածն է մայրս:
3) Ոչ մի երկաթյա դուռ, ոչ մի պահակ աշտարակի գլխին:
4) Առաջարկություն է եղել նիստը շարունակելու դռնփակ:

35. Բառակապակցություններից քանիսո՞ւմ որոշիչ *կա*.

1. խմելու ջուր
2. հարձակվելու հրաման
3. տեսնելու ցանկություն
4. ուտելու հատապտուղ

1) մեկում
2) երկուսում
3) երեքում
4) բոլորում

36. Տրված նախադասություններից քանիսո՞ւմ բացահայտիչ *կա* (նախադասությունները կետադրված չեն).

1) Ես մերժողս ամեն կապանք տես գերին եմ քո սիրուն:
2) Ավագ հորեղբոր Հակոբի խորհուրդները նրա համար շատ կարևոր էին:
3) Ադամ ահա քեզ ընկեր գեղեցիկ Լիլիթը:
4) Ձեռքին պապի ռազմաճակատից ուղարկված նամակն էր տարիների ընթացքում մաշված և դժվարընթեռնելի:

1) մեկում
2) երկուսում
3) երեքում
4) չորսում

37. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերբայական դարձված *կա*.

1) Ամբողջ կյանքում աշխատած մարդու համար դժվար է միանգամից ձեռքերը ծալած նստել:
2) Կինը մոտեցավ և վրանի անկյունում դարսած անկողնուց երկու բարձ մեկնեց հյուրերին:

3) Ծովափի կինը երբեք չէր նստել մխացող կրակի առաջ:
4) Մեկնել էր հարազատ գյուղ հյուծված ու քայքայված առողջությունը վերականգնելու համար:

38. Նշված նախադասություններից քանիսո՞ւմ կա ենթակա երկրորդական նախադասություն.

1) Երնե՛կ նրան, ով իր գործով Կապրի անվերջ, անդադար:
2) Հաղորդվեց, որ հարավարևմտյան քամիները օդի տաք հոսանքներ են բերում Հայաստան:
3) Ինչ լա՛վ է, Սո՛մա, որ քո կրակում վառվում եմ ես էլ:
4) Երեկ էր, որ իմացա ուրախալի այդ լուրը:

1) ոչ մեկում
2) բոլորում
3) երկուսում
4) երեքում

39. Ո՞ր նախադասության մեջ թվականի կազմության կամ գրության *սխալ չկա*.

1) Մեսրոպյան գիրն ստեղծվեց V-րդ դարի սկզբում:
2) Ռուսական հարյուրերկուերրորդ ռազմաբազան տեղակայված է Գյումրիում:
3) Հարկավոր էր տեքստից դուրս գրել ինական գոյական և ածական:
4) Այս ամառ Թուրքիայի անտառների մեկ երրորդը հրդեհի էր մատնվել:

40. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծվածները որոշիչ *են*.

1) ***A, B, C, ... E, F*** կետերը կոչվում են բազմանկյան գագաթներ, իսկ **AB, BC** հատվածները՝ կողմեր:
2) Զուգահեռագիծ կոչվում է քառանկյունը, որի հանդիպակաց կողմերը ***զույգ առ զույգ*** զուգահեռ են:
3) Բազմանկյունը կոչվում է ***ուռուցիկ***, եթե իր ցանկացած երկու հարևան գագաթներով անցնող ուղղի մի կողմում է:
4) Եթե քառանկյան կողմերը ***հավասար*** են և զուգահեռ, ապա այդ քառանկյունը զուգահեռագիծ է:

41. Նշել այն գլխավոր նախադասությունների համարները, որոնք տեղադրելու դեպքում երկրորդական նախադասությունը կլինի ենթակա.

....ովքեր չէին հրավիրվել:

1. Հեռացնում էին նրանց,
2. Հեռացվողները նրանք էին,
3. Չէին հեռանում նրանք,
4. Հեռացվողներն էին նրանք,
5. Հայտնի էր՝

42. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.

Եղնիկը, որը վիրավորվել էր հրացանի կրակոցից, անհանգիստ շարժումներով վեր կացավ, շարժվեց մոտակա թփուտները, որ թաքնվի հետապնդող բարակների սուր աչքից:

1) 

2) 

3) 

4) 

43. Նշել այն տարբերակների համարները, որոնցում բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ է փոխակերպված.

1) ***Թեև հողը բոլորովին չորացել է, բայց լեռնային գետերը անձրևներից հետո երկար ժամանակ շարունակում են գիժ ու ըմբոստ մնալ:***
Լեռնային գետերը անձրևներից հետո երկար ժամանակ շարունակում են գիժ ու ըմբոստ մնալ՝ չնայած հողի բոլորովին չորանալուն:

2) ***Այդ միտքը ժամանակին ինձ հուշել է լեզվի ուսուցիչս՝ մի մարդ, որ անսպառ գիտելիքներ ուներ թերևս ամեն ինչի մասին:***
Այդ միտքը ժամանակին ինձ հուշել է մի մարդ՝ թերևս ամեն ինչի մասին անսպառ գիտելիքներ ունեցող ուսուցիչս:

3) ***Մոտակա գյուղերի անհնազանդ երիտասարդներին, որոնք անմատչելի լեռներն էին հեռացել, գիշերները մենք ծածուկ հասցնում էինք ջուր և սնունդ:***
Անմատչելի լեռները հեռացած մոտակա գյուղերի անհնազանդ երիտասարդներին գիշերները մենք ծածուկ հասցնում էինք ջուր և սնունդ:

4) ***Գործը հանձնարարվեց այն սպային, որը մասնագիտությամբ կապավոր էր:***
Գործը հանձնարարվեց մասնագիտությամբ կապավոր սպային:

44. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների փոխակերպումներից ո՞րն *է սխալ*.

1) ***Լույսը բացվելուն պես կարոտակեզ հայացքով նայում էր հեռուն:***
Հենց որ լույսը բացվում էր, կարոտակեզ հայացքով նայում էր հեռուն:

2) ***Հարդաշաղախ կավով ծեփված խրճիթներից մեկի կտուրին հավաքվել են գյուղի հոգնաբեկ մշակները:***
Խրճիթներից մեկի կտուրին, որ հարդաշաղախ կավով է ծեփված, հավաքվել են գյուղի հոգնաբեկ մշակները:

3) ***Հրամանն անընդհատ հիշեցնում էր իր՝ նպատակին հասնելու համար ոչինչ չխնայելու մասին:***
Հրամանն անընդհատ հիշեցնում էր այն մասին, որ նպատակին հասնելու համար ինքը ոչինչ չպետք է խնայի:

4) ***Սիրում էր իր զինվորների՝ Հայաստանից ուղարկած ծխախոտը:***
Սիրում էր այն ծխախոտը, որ իր զինվորները Հայաստանից ուղարկում էին:

45. Ուրիշի ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն *է ճիշտ*.

— Ես սիրում եմ քեզ պես մարդկանց,— ասաց Մարութխանյանը Միքայելին և ապա ավելացրեց,— ինձ խաբում ես, և միայն ծույլերը կարող են քեզ ագահ ասել:

1) Մարութխանյանը Միքայելին ասաց, որ ինքը սիրում է նրա պես մարդկանց, և ապա ավելացրեց, որ նրան խաբում է, և միայն ծույլերը կարող են նրան ագահ ասել:
2) Մարութխանյանը Միքայելին ասաց և ապա ավելացրեց, որ ինքը սիրում է նրա պես մարդկանց, իրեն խաբում է, և միայն ծույլերը կարող են նրան ագահ ասել:
3) Մարութխանյանը Միքայելին ասաց, որ ինքը սիրում է նրա պես մարդկանց, և ապա ավելացրեց, որ նա իրեն խաբում է, և միայն ծույլերը կարող են նրան ագահ ասել:
4) Մարութխանյանը Միքայելին ասաց, որ նա սիրում է իր պես մարդկանց, և ապա ավելացրեց, որ նա իրեն խաբում է, և միայն ծույլերը կարող են իրեն ագահ ասել:

46. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական *սխալ կա.*

1) Ինչո՞ւ էր հայրը իրենից խլում բանալին, որը միշտ իր մոտ էր եղել, և որը մանկության օրերին իր ձեռքից առնում էին միայն պատժած լինելու համար:
2) Հաջորդ վայրկյանին նա մի կողմ նետեց դրամը, շուռ եկավ ու փախավ՝ ինչպես կվազեր մոտալուտ աղետի ահից գլուխը կորցրած թշվառականը:
3) Եթե անտառում հողմ կամ փոթորիկ է լինում, ծառերը, մեջք մեջքի տված, խշշում են, օրորվում:
4) Նա տարտամ հայացքը կտրում է հողից, տանում է հանդիպակաց բարձունքներով, և արևա-ցոլքից կկոցվում են դարչնագույն աչքերը:
5) Նրանք գաղափար չունեն, ինչպես է կարիքը քայքայում մարդուն:

47. Տարբերակներից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա.

1) **Ու**-ն շաղկապ է, **ա՛խ**-ը՝ ձայնարկություն, իսկ **5**-ը՝ քանակական թվական:
2) Բուհում սովորելու տարիներին նա արդեն աչքի ընկավ իր քաղաքական գործունեությամբ:
3) 2009-2020 թթ. սովորել եմ Երևանի՝ Ն. Աղբալյանի անվան միջնակարգ դպրոցում:
4) **X**-ով, **Y**-ով և **Z**-ով նշանակում են անհայտ թվերը:
5) Արիստոտելին պարտական եմ այնքան, որքան իմ հորը. հայրս ինձ կյանք է տվել, իսկ Արիստոտելը՝ այն իմացությունը, թե ինչպես կարելի է լավ ապրել:

1) մեկում 2) երկուսում 3) երեքում 4) ոչ մեկում

48. Ո՞ր շարքում շարահյուսական վերլուծության *սխալ կա.*

Պատշգամբից շողշողացին շեփորների պղնձաձույլ կրակները, հետո կարմիր լույսերի մեջ պայծառ օրվա պես հոսեցին կինոյի լուսարձակները:

1) ***պատշգամբից*** **–** տեղի պարագա, ***լուսարձակները*** **–** ուղիղ խնդիր
2) ***շողշողացին*** **–** պարզ ստորոգյալ, ***պղնձաձույլ*** **–** որոշիչ
3) ***շեփորների*** **–** հատկացուցիչ, ***օրվա պես*** **–** ձևի պարագա
4) ***հետո*** **–** ժամանակի պարագա, ***պայծառ*** **–** որոշիչ

49. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների շարահյուսական վերլուծության սխալ *կա*.

Ծարավի զգացողությունն առաջանում է այն ժամանակ, երբ օրգանիզմը կորցնում է իր քաշի 1%-ի չափ ջուր, 5%-ի կորուստը կարող է հանգեցնել գլխապտույտի, իսկ 10%-ինը՝ մահվան:

1) **առաջանում է** – պարզ ստորոգյալ, **այն** - որոշիչ
2) **երբ** – պայմանի պարագա, **քաշի -** հատկացուցիչ
3) **1%-ի չափ** – որոշիչ, **ջուր** – ուղիղ խնդիր
4) **5%-ի** – հատկացուցիչ, **կորուստը** – ուղիղ խնդիր
5) **գլխապտույտի** – հանգման անուղղակի խնդիր, **10%-ինը –** ենթակա

50. Նշված հատկանիշներից որո՞նք են բնորոշ գիտական ոճին.

1) ձևակերպումների ճշգրտությունը և սեղմությունը
2) խոսքի արտահայտչական և պատկերավորման միջոցների հաճախակի գործածությունը
3) կանոնների, սահմանումների, բանաձևերի սակավությունը
4) վերացական իմաստ արտահայտող գոյականների հաճախակի կիրառությունը
5) եզրույթների, զբաղմունքային կամ մասնագիտական բառերի գործածությունը

51. Բերված նկարագրություններից յուրաքանչյուրը գործնական գրության ո՞ր տեսակին է վերաբերում.

ա) Գործնական գրության այդ տեսակը բացահայտում է անհատին, վեր հանում նրա մարդկային և մասնագիտական որակները, դրական այն հատկանիշները, որոնք կարևորվում են աշխատանքի ընթացքում:

բ) Որևէ փաստ, գործունեություն, իրադարձություն հաստատող փաստաթուղթ է, որը իրավասու են տալու միայն պաշտոնատար անձինք:

գ) Պարտավորագրի մի տեսակ է, որով տվյալ անձը հաստատում է, որ մեկ այլ անձից, կազմակերպությունից ստացել է ինչ-որ բան՝ դրամ, փաստաթղթեր, ապրանք երբեմն նաև այլ անձի կամ անձանց փոխանցելու համար:

դ) Գործնական գրության տեսակ է, որով մարդիկ բացատրում են իրենց ուսումնական կամ աշխատանքային գործունեության ընթացքում կատարած այն արարքները, որոնցով խախտել են տվյալ հաստատությունում կամ առհասարակ ընդունված որևէ կանոն:

1) **բացատրագիր**
2) **ստացական**
3) **բնութագիր**
4) **տեղեկանք**

1. ա — 1, բ — 4, գ — 2, դ — 3
2. ա — 3, բ — 4, գ — 2, դ — 1
3. ա — 3, բ — 3, գ — 4, դ — 2
4. ա — 2, բ — 4, գ — 1, դ — 1

52. Տրված նկարագրությունը պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցին է բնորոշ.

Առարկաների, երևույթների արտաքին կամ ներքին նմանության հիման վրա գեղարվեստական խոսքում բառերը հաճախ գործածվում են ոչ իրենց սովորական իմաստով:

1) անձնավորում
2) մակդիր
3) փոխաբերություն

4) համեմատություն

53. Ո՞ր նախադասությունն է գրաբարով.

1) Հիմիկ դժարեց բաներս, որ թաթարն եղաւ թագաւոր:
2) Ո՜ տայր ինձ զծուխ ծխանի Եւ զառաւօտն Նաւասարդի:
3) Վեճում հաճախ հաղթում է պերճախոսությունը և ոչ թե ճշմարտությունը:
4) Հիւսիսային կողմն աշխարհի Առատութի՛ւն թող ըլլայ...

54. Միայն արդմտահայերենին բնորոշ քանի՞ բառ յ բառաձյ կա տրված հատվածում.

Հոն ժպտեցավ կյանքը ինծի,
Համայքներու հույլովն անցավ,
Եվ ուրվական մը կասկածի
Անոր մոտեն երբեք չանցավ:

1) հինգ 2) վեց 3) յոթ 4) ութ

55. Տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել տարբերակներից որյէ մեկը՝ *Ճիշտ է, Սխալ է.*

1.

1) Գրական հայերենի երկու տարբերակները կապվում են մեր լեզվի նախորդ երկու պատմական փուլերին. արևելահայերենը՝ միջին հայերենին, արևմտահայերենը՝ գրաբարին:
2) Աձանցը, ավելանալով բառին, չի կարող կազմել նոր բառ՝ նոր խոսքիմասային պատկանելությամբ:
3) Որոշ հոլովների քերականական իմաստը կարող է արտահայտվել կապերի միջոցով:
4) Հնչերանգով կապված բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների միջև կարող է դրվել ստորակետ, միջակետ կամ բութ:
5) Բնութագիրը սահմանված ձևով գրվածք է, որով բնութագրվողը ներկայացվում է և՛ իր անձնային, և՛ իր մասնագիտական հատկանիշներով:

2.

1) Կապերը, ի տարբերություն շաղկապների, կարող են դառնալ նախադասության անդամ՝ առանց կապվող բառի:
2) Չկան չտրոհվող դերբայական դարձվածներ:
3) Թվականը չի կարող լինել միակազմ նախադասության գերադաս անդամ:
4) Հայերենում շեշտը միշտ դրվում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա:
5) Միայն սահմանական եղանակի ժամանակաձևերը կարող են կազմվել օժանդակ բայով:

56. Ո՞ր նախադասությունն է արտահայտում պարբերության հիմնական միտքը.

Հիշեցե՛ք, ձեր ունեցած ամեն ինչից միշտ պետք է տաք: Դուք պետք է նույնիսկ խենթորեն տաք: Պետք է շռայլ լինեք: Պետք է տաք բոլոր ձեզ հանդիպողներին: Այդ ժամանակ ոչ ոք և ոչ մի բան ձեզ խաբելու ուժ չեն ունենա, որովհետև եթե գողին տաք, նա չի կարողանա ձեզանից գողանալ և արդեն գող չի լինի: Եվ ինչքան շատ տաք, այնքան ավելի շատ պիտի ունենաք տալու համար:

1) Ոչ ոք ձեզ խաբելու ուժ չունի:

2) Ամեն ինչից, որ դուք ունեք, պետք է տաք մարդկանց:
3) Ձեր ունեցածից շատ տալով՝ կաղքատանաք:
4) Գողը ձեզանից կգողանա, եթե նրան չտաք:

57. Թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական ֆ քերականական ճիշտ կառուցվածքին.

1) Ո՞րն է դա: Անտարակույս՝ խոսքի ստույգ լինելը: Որքան ստույգ լինի խոսքը, այնքան լավ կծառայի իր գլխավոր նպատակին՝ մարդկանց փոխադարձ հաղորդակցմանը:
2) Այստեղ են ասել՝ ճաշակի մասին չեն վիճում (թեև շատ հաճախ վիճում են և այն էլ՝ կրքոտ ու անզիջում): Ինչ էլ լինի, լավ խոսքն ունի մի նշան, մի հատկանիշ, որ անվիճելի է բոլոր ճաշակների համար:
3) Չկարծեք, թե լավ խոսքը բոլոր մարդիկ նույն կերպ են հասկանում: Կան մարդիկ, որ լավ խոսքը, գրավոր լինի թե բանավոր, համարում են ճոխ, փարթամ խոսքը՝ մատչելի բառերով:
4) Մարդիկ էլ կան, որ հավանում են ամենքին հասկանալի խոսքը: Ոմանց մաքուր գրական խոսքն է դուր գալիս, ոմանց էլ՝ ժողովրդական ոճերով, նույնիսկ բարբառային դարձվածքներով համեմված խոսքը: Ճաշակի հարց է:

1) 2, 1, 4, 3
2) 1, 3, 2, 4
3) 3, 4, 2, 1
4) 4, 1, 3, 2

58. Ո՞ր մտքերը չեն հակասում տեքստի բովանդակությանը.

Ջուրը Երկրի վրա ամենատարածված նյութերից է: Ջրի գոյության տարբեր ձևերը՝ մառախուղը, անձրևը, եղյամը, ձյունը, կարկուտը, սառույցը, պայմանավորված են օդերևութաբանական գործոններով:
Տարածվածության և կենսական անհրաժեշտության պատճառով ջուրը միշտ համարվել է կյանքի գոյության սկզբնաղբյուր: Ըստ էվոլյուցիոն տեսության՝ կյանքը առաջացել է հենց ջրում, և ջուրը յուրաքանչյուր կենդանի էակի օրգանիզմի մեծ մասն է կազմում:
Առանց սննդի ավելի երկար կարելի է ապրել, քան առանց ջրի:
Հին ժամանակներում ջուրը եղել է նաև պաշտամունքի առարկա, և ջրի աստծուն զոհեր են մատուցվել: Հայկական լեռնաշխարհում՝ ջրանցքների և աղբյուրների ակունքներում, կանգնեցնում էին քարակերտ «վիշապներ», որոնք պետք է կենարար ջուրը պահպանեին չար աչքից:
1) Օդերևութաբանական տարբեր պայմաններում ջուրն ունենում է գոյության տարբեր ձևեր:
2) Կենդանի էակների, այդ թվում նաև մարդ ու օրգանիզմի մեծ մասը կազմված է ջրից:
3) Առանց սննդի կարելի է ապրել, իսկ առանց ջրի՝ ոչ:
4) Հայկական լեռնաշխարհում՝ ջրանցքների և աղբյուրների ակունքներում, կանգնեցնում էին քարակերտ «վիշապներ», որոնց զոհեր են մատուցել:

59. Տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել տարբերակներից որյէ մեկը՝ *Ճիշտ է, Սխալ է.*

1) Մովսես Խորենացին որպես սկզբնաղբյուր օգտագործել է նաև բանահյուսական երկեր՝ գտնելով դրանց պատմական հիմքը, զատորոշելով առասպելն իրականից, երբեմն համեմատելով հայ և օտար դիցաբանություններն ու առասպելական հերոսներին:
2) «Մթնշաղի անուրջների» գրեթե բոլոր բանաստեղծությունները խորապես անձնական բովանդակություն ունեցող եղերերգեր են:
3) «Ծաղկած փշալարեր» վիպակում Գ. Մահարին պատկերել է անհատի ողբերգական ճակատագիրը և կործանումը:
4) Հայ դասական գրականության մեջ քիչ չեն կենդանիների կերպավորումները: Հ. Թումանյանի, Ստ. Զորյանի, Համաստեղի, Ա. Բակունցի, Հ. Մնձուրու, Հ. Մաթևոսյանի ստեղծագործությունների շատ էջեր պատմում են մարդ-կենդանի հարաբերության, կենդանիների միջոցով մարդկանց աշխարհի, ինչպես նաև կենդանիների մասին:
5) «Խոնարհ աղջիկը» պատմվածքում Ա. Բակունցի գլխավոր նպատակը գյուղական միջավայրում ուսուցչի դժվար աշխատանքի պատկերումն է:
6) Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը ավարտվում է Եղիշեի՝ Ավարայրի դաշտում նահատակված հայ հերոսների անունների թվարկումով:

60. Տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել տարբերակներից որյէ մեկը՝
Ճիշտ է, Սխալ է.

1) «Վարդանանք» պատմավեպում Դ. Դեմիրճյանը Վասակի կերպարը կերտելիս վիպական գործողություններում ցուցադրել է նրա քաղաքական ձախողումների և անձնական բարդ դրամայի զուգակցումը:
2) Նորավեպում հեղինակը խուսափում է ընդարձակ նկարագրություններից, գործողությունները զարգանում են արագ ու սրընթաց, իսկ պատմությունը սովորաբար ունենում է անսպասելի ավարտ:
3) Գրիգոր Նարեկացու տաղերում փոխադարձ սիրո գովերգումով բացահայտվում է մարդու ներաշխարհը:
4) Եթե իր էպիկական ստեղծագործություններում Հ. Թումանյանը գերազանցապես պատկերել է իրենից դուրս գտնվող առարկայական աշխարհը, մարդու հոգեբանությունն ու ճակատագիրը, ապա քառյակներում կերպավորվում է հենց ինքը՝ բանաստեղծը:
5) Փոքր Միհրը փակվում է Ագռավաքարում, քանի որ չի կարողանում սպանել Չմշկիկ Սուլթանին և լուծել հոր վրեժը:
6) Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմում վերջին հարյուրամյակի հայոց պատմությունը միահյուսված է Կոմիտասի ընտանեկան կյանքի և անձնական երջանկության նկարագրությունը: